Դարձաւ, կինաց, խասաւ Ոստանայ կապան, էսաց.—Ցիշա՛ իմ խացն ը գինին, Տէր կենդանին, Մարութայ բանձր Աստուարածին, խաչ պատրազին վեար իմ աջ թիւին,—զարկին, կտրից ըզարծաթ, ըզոսկին, ըլաւից[1]) մեանչ խոզ ու քեարին, ազատից Քիւռիկ-Ջալալին։

Էլաւ, խլծաւ, խասաւ Վանայ դեաշտ. Վանայ դեաշտէն իրիշկից, տեսաւ՝ մէկ ագռաւ կէր, կը խուսէր. նետ-անեղ առից, էզար, դիպաւ ագռաւին. ագռաւ բիրինդար[2]) էլաւ։ Ագռաւ փախաւ, էնիկ ձին քշից, յետիւ կինաց. խասաւ մէկ քեար, տեսաւ, որ պեաց ի, մաղազայ ի. տեսաւ՝ ագռաւ մտաւ մաղազէն։ Ջինք զձին դարձիւց յիտիւանց վեար խոզուն, ինչ դարձիւց, էլ ձիու ոտ չդադրաւ վեար խոզուն, կը թաղուէր։

Օր կէսօր էր. քեանի քշից, ձին թաղուաւ, մինչիւ յիրիկուան։ Ձին առից, քեաշից մըղազէն, էսաց.—Խլիսուն լիւսնայ, ըլնիմ, էրթամ։ Խիտ որ մտաւ էնդեղ, ձիուց էջաւ տակ, զիւր ձին կապից, տիւռ էկաւ իրար, մնաց մէջ. էլ տիւս չ'էլաւ, էլ Աստուած ամր[3]) չ'էրաւ, որ գէր տիւս. մնաց էնդեղ, մինչիւ ախշրքի վիրջին խոզ կը կրքուը[4]), ձիու ոտաց տակ դայամիշ[5]) կ'ըլնը։

Տարին մէկ անգամ յէրը տիւռ կ'բացուը. էն ժամանակ ինչ Երուսաղէմ լիւս կ'կաթը, էն յէրի տիւռ կ'բացուը. էն էլ ինչկը խամար կ'բացուը.—Աստծու խաթրը խամար։—Մանանայ էրկնուց կ'թափը էնդեղ, ինքն էլ կ'ուտը, ուր ձին էլ կ'ուտը. տարին մէկ անգամ կ'ուտին, էլ չին քեաղցանայ։

Էն տեղաց անուն էլ Ագռաւու քեար կ'ասին. ինչ ագռաւ մտաւ էնդեղ, էն դիմաց կ'ասին Ագռաւու քեար։

Տարին մէկ ամիս, Գիլան ամիս, էն քեարից էնու ձիու շեռ կ'տայ տիւս։

---

[1]) Շուռ տուեց։ [2]) Վիրաւոր։ [3]) Հրաման։ [4]) Կ'ամրանայ։ [5]) Դիմանալ։